ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Կոմիտասը որպես մանկավարժ»

Հետազոտող ուսուցիչներ՝

Ազնիվ Բարեղամյան (ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոց),

Էլյա Քոչարյան (Գ. Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոց),

Էմիլիա Սարիբեկյան (Մ. Մելքոնյանի անվան հ. 11 հիմնական դպրոց),

Գայանե Ղազարյան (Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց)

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Կոմիտաս վաղ շրջան----------4

Կոմիտասը որպես բանահավաք----------9

Կոմիտասը որպես մանկավարժ----------18

Եզրակացություն----------25

Գրականության ցանկ----------26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոմպոզիտոր, ազգագրագետ, գիտնական, մանկավարժ, խմբավար, երգիչ, հասարակական հզոր եռանդի տեր արվեստագետ Կոմիտասին վիճակվեց շրջադարձային դեր խաղալ հայ երաժշտական մշակույթի պատմական զարգացման ճանապարհին։ Կոմիտասի մեծագույն վաստակը ազգային վերածննդի դարաշրջանի գեղարվեստական գաղափարների կուտակումն էր, դրանց մարմնավորման կենսունակ ձևերի հայտնաբերումը։ Մշակելով իր գեղագիտական իդեալները, հիմնվելով հայ երաժշտության խոր և բազմակողմանի ուսումնասիրության վրա՝ նա առաջ քաշեց հայ երաժշտության ինքնուրույնության կարևոր թեզը և իր բազնաբնույթ գործունեությամբ հիմնադրեց ազգային դասական երաժշտությունը, կանխանշեց նրա հետագա զարգացման ուղիները։ Կոմիտասը հայ երաժիշտներից առաջինը հայտնաբերեց ազգային արվեստի ինքնատիպության հասանելի ակունքները, գիտնականին հատուկ հետևողականությամբ հետազոտեց և բացահայտեց այդ ինքնատիպության օրինաչափությունները։ Կոմիտաս

հրապարակախոսին հատուկ կրքոտությամբ պաշտպանեց հայ երաժշտության ինքնուրույնության գաղափարը։ Թերևս այստեղից է բխում մեր թեմայի ընտրության պատճառը և հետազոտական աշխատանքում Կոմիտաս-մանկավարժի ավանդույթներին անդրադառնալը։ Հետազոտության նպատակն է ներկայացնել Կոմիտաս վարդապետին, մեկնաբանել վերջինիս գործունեության կարևորությունը և եղածը դիտարկել մերօրյա մանկավարժության մեջ։

ԿՈՄԻՏԱՍ. ՎԱՂ ՇՐՋԱՆ

Կոմիտաս արվեստագետը հայ գեղջուկի ստեղծագործությունը բնորոշեց որպես ազգի հոգևոր հարստությունների շտեմարան։ Ազգայինի հավատարիմ ջատագովը չսահմանափակվեց ազգային նեղ շրջանակներում, մեզանում առաջինը խորությամբ ուսումնասիրեց մերձավոր արևելքի ժողովուրդների երաժշտությունը, հանրաճանաչ դարձրեց քրդական ժողովրդական երգը։ Հայրենասեր արվեստագետ Կոմիտասը հոգատարությամբ հավաքեց հայ գեղջուկի երգերը, մշակեց իր ոգեշունչ կատարմամբ, խթանեց ազգային հոգևոր արժեքների տարածումն ու ճանաչումը։

Հայ ժողովրդի գեղարվեստական գանձարանի հարստությունն արժեքավորող Կոմիտասը ավանդապահ էր։ Պահպանելով անցյալի արժեքները՝ պատմականորեն կոչված էր զարգացնել, հայտնաբերել դրանց կենսուրախությունը, նորին ծառայեցնելու ուղիները ու ձևերը։ Այդ ճանապարհին նրան վիճակվեց կերտել ազգային ոճի բարձր չափանիշները։

Հայ ժողովրդի ճակատագրով և ազգային մշակույթի զարգացման հեռանկարներով խորապես մտահոգված Հ. Թումանյանը, Հ. Հովհաննիսյանը, Ավ. Իսահակյանը, Մ. Աբեղյանը, Ա. Չոպանյանը, Գ. Լևոնյանը, Թ. Թերլեմեզյանը, Ե. Թադևոսյանը ոգեշնչում էին Կոմիտասին, քաջալերում նրան ստեղծագործական որոնումներում։

Բանիմաց հայրենակիցների կողմից սիրված Կոմիտասի արվեստը գրավեց օտարազգի խոշորագույն երաժիշտներին՝ Դեբյուսիին, Սենսանսին։ Նրա ստեղծագործական նվաճումներն ու գործունեությանը ուղղությունը բարձր գնահատեցին Գնեսինը, Օ. Ֆլայշերը , Մելիշարը, Օբրին, Լալուան արվեստասերները։

Կոմիտասի կյանքի ու գործի իրական արժեքավորումը հիմնականում կապված է հետպատերազմյան շրջանի հետ։ Բազմաթիվ նոր նյութերով համալրվեց արխիվը, դրվեց կոմպոզիտորի երկերի բազմահատոր ժողովածուի հրատարակության սկիզբը։ Դա խոշոր կոմիտասագետ Ռ. Աթայանից տասնյակ տարիների, բազմակողմանի և մանրազննին աշխատանք պահանջեց։ Մեծ ընդգրկումով, ծանրակշիռ դիտողություններով ու ծավալուն

ծանոթագրություններով հարուստ այդ աշխատանքը մեծ նվիրումի արդյունք էր։

Վերջին տասնամյակներում լույս տեսան մենագրություններ, ուսումնասիրություններ, հանրամատչելի գրքույկներ, մատենագիտական ժողովածուներ, հարյուրավոր հոդվածներ։ Գիտական լուրջ ուսումնասիրությունները տեղ գտան «կոմիտասական» ժողովածուներում։ Կոմիտասագիտությունն այսօր հայ երաժշտագիտության մեջ ազգայինի համար առանցքային հարցերի լուսաբանման տեսակետից ամենից արգասավոր ճյուղերից է։

Արվեստագետի կերպարն ոգեշնչեց բանաստեղծներին ու արձակագիրներին, քանդակագործներին ու նկարիչներին։ Բանաստեղծական հզոր ներշնչանքով կյանք ստացավ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն»-ը, որը մեծ արժեք պոեզիայի գիտական ճշգրության ամբողջական ձուլվածք է։

Կոմիտասի արվեստը ուղղակի ու միջնորդավորված ներգործեց երաժշտական մշակույթի ողջ ընթացքի վրա։ Բազմաթիվ ու բազմաբնույթ ստեղծագործություններում հնչեցին Կոմիտասի ձայնագրած մեղեդիները, նրա անհատականության բովով անցած ժողովրդական արվեստի գոհարները։ Հայ երաժիշտների մի քանի սերունդ որդեգրեց

նրա գեղարվեստական սկզբունքները, համարձակորեն ընդլայնեց նրա նշագծաց ուղիները։
Հնուց ի վեր մեծաշնորհ երաժիշտների ծննդավայր է ճանաչվել Գողթն գավառը, որի Ցղնա գյուղից էին Կոմիտասի նախնիները։ XVII դարի վերջին տեղափոխվելով Կուտինա քաղաքը՝ նրանք պահպանեցին իրենց հարուստ երաժշտական ավանդույթները։

Կոմիտասը ծնվել է սեպտեմբերի 26-ին։ Հայ երգահան, երգիչ, երաժշտական էթնոլոգ, երաժշտագետ, վարդապետ և ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր։ 1881-1893 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ 1894 թվականին ձեռնադրվել է աբեղա և ստացել Կոմիտաս անունը։ 1895 թվականին Կոմիտասին շնորհվել է վարդապետի հոգևոր աստիճան։ 1895-1896 թվականներին Թիֆլիսում կոմպոզիտոր Մակար Եկմալյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է երաժշտական տեսական առարկաներ, որից հետո՝ 1896-1899 թվականներին, ուսումը շարունակել է Բեռլինի Ֆրիդրիխ

Վիլհելմ արքունի համալսարանում և Ռիչարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում։

Կոմիտասի գիտական և ստեղծագործական գործունեությունը նոր էջ բացեց հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ։ Հայ հոգևոր և ժողովրդական երաժշտությանը վերաբերող իր գիտական ուսումնասիրությունները Կոմիտասը ներկայացրել է Եվրոպայի մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Միջազգային երաժշտական ընկերության համաժողովներին, որի հիմնադիր անդամներից էր։ Կոմիտաս-գիտնականը նպատակ ուներ աշխարհին ներկայացնել հայկական երաժշտական հարուստ մշակույթի ավանդույթները և ապացուցել, որ «հայն ունի ինքնուրույն երաժշտություն»։

Կոմիտասի ստեղծագործական ոճը յուրահատուկ է իր տեսակի մեջ։ Հիմնվելով հայ ավանդական երաժշտական մշակույթի առանձնահատկությունների վրա՝ նա հայտնաբերեց հարմոնիայի և պոլիֆոնիայի կիրառման նոր և հարուստ հնարավորություններ, որոնք պատշաճ էին հայ երաժշտական մտածողությանը։ Նրա երաժշտական ժառանգությունն ընդգրկում է վոկալ «Անտունի», «Կռունկ»,

«Ծիրանի ծառ», «Ալ այլուղս», «Զինչ ու զինչ» և այլն, խմբերգային՝ ժողովրդական և հոգևոր «Անձրևն եկավ», «Լուսնակն անուշ», «Գութաներգ», «Հայր մեր», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական», «Էջ Միածինն ի Հօրէ», «Տէր, ողորմեա» և այն, և դաշնամուրային «Յոթ պար», «Մշո շորոր» ժանրի ստեղծագործություններ[1]: Կոմիտասի ստեղծագործության մեջ առանձնակի կարևորություն է ներկայացնում իր միակ ավարտուն մեծակտավ գործը՝ «Պատարագ»-ը արական կազմի համար: Կոմիտասն ունեցել է նաև օպերա ստեղծելու մի քանի մտահղացումներ, որոնք մնացել են անկատար:

[1] Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ (1869-1935)», էջ 14:

ԿՈՄԻՏԱՍԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՀԱՎԱՔ

Անգնահատելի է Կոմիտասի ավանդը բանահավաքչության գործում։ Շրջելով հայաբնակ բազմաթիվ բնակավայրերով՝ հմուտ երաժիշտը ձայնագրել է հայ ժողովրդական երգարվեստի տարբեր ժանրերի պատկանող մի քանի հազար երգ՝ այսպիսով մոռացումից փրկելով հայ ժողովրդի ստեղծած մի ամբողջ մշակույթ։ Այդ երգերն իր գիտական և ստեղծագործական երկերի ատաղձն են կազմում։

Որպես երգահան, երգիչ և խմբավար՝ Կոմիտասը բազմաթիվ համերգներ է ունեցել Հայաստանում, Եվրոպայում, Եգիպտոսում, Կոստանդնուպոլսում, Թիֆլիսում և այլուր. նրա կատարումները մշտապես հիացական արձագանք են ունեցել ունկնդիրների շրջանում։ Կոմիտասը դասավանդել է Գևորգյան ճեմարանում, ապա նաև մասնավոր դասեր վարել Կոստանդնուպոլսում։ Նա կրթել է շնորհալի երիտասարդների մի սերունդ։ Իր աշակերտներից ոմանք հայ երաժշտության բնագավառում կարևոր դեր խաղացին. Բարսեղ Կանաչյանը դարձավ կոմպոզիտոր, Վարդան Սարգսյանը եղավ նրա

ստեղծագործությունների տարածողը, Միհրան Թումաճանը շարունակեց զբաղվել բանահավաքչությամբ։ Որբանալով վաղ տարիքում՝ 1881 թվականին, 12-ամյա Սողոմոնը Քյոթահիայի հոգևոր առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանի հետ մեկնում է Սուրբ Էջմիածին և սկսում ուսանել Գևորգյան ճեմարանում։ 1895 թվականին ձեռնադրվում է վարդապետ, որից հետո մեկնում է Թիֆլիս և վեց ամիս հարմոնիա է ուսանում Մակար Եկմալյանի մոտ։ Սովորել է Բեռլինում՝ պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում, որից հետո փորձել է կիրառել այդ փորձը ազգային ավանդույթ կառուցելու համար։ Երաժշտության պարապմունքներին զուգահեռ Կոմիտասը հաճախում է նաև Բեռլինի Կայսերական համալսարանի փիլիսոփայության, գեղագիտության, ընդհանուր և երաժշտության պատմության դասախոսություններին։

1899 թվականին սեպտեմբերին Կոմիտասը վերադառնում է Էջմիածին։

Նա հավաքել և գրառել է ավելի քան 3000 հայկական ժողովրդական երաժշտության նմուշներ, որոնցից ավելի քան կեսը հետագայում կորել է և միայն մոտ 1200-ն է պահպանվել։

Բացի հայ ժողովրդական երգերից, նա նաև հետաքրքրվել է այլ մշակույթներով և 1904 թվականին հրատարակել քրդական ժողովրդական երգերի երբևէ գոյություն ունեցող առաջին ժողովածուն: Նրա երգչախումբը շատ եվրոպական երկրներում ներկայացրել է հայկական երաժշտությունը՝ արժանանալով այդ թվում Կլոդ Դեբյուսիի գովասանքին: 1910 թվականին Կոմիտասը հաստատվում է Կոստանդնուպոլսում՝ խուսափելով Էջմիածնի ծայրահեղ պահպանողական հոգևորականների վատ վերաբերմունքից և հայկական երաժշտությունը ներկայացնում ավելի լայն լսարանի: Կոմիտասին ջերմորեն ընդունել են հայկական համայնքներում, իսկ Արշակ Չոպանյանը նրան անվանել է «հայկական երաժշտության փրկիչ»[1]:

Հայոց ցեղասպանության ժամանակ՝ 1915 թվականի ապրիլին, շատ այլ հայ մտավորականների հետ մեկտեղ օսմանյան կառավարության կողմից Կոմիտասը ձերբակալվում է և աքսորվում՝ բանտարկյալների ճամբար: Նրան շուտով ազատում են, որից հետո ստանում է հոգեկան խանգարում և նրա մոտ ձևավորվում է հետվնասվածքային սթրես: Կոստանդնուպոլսի ատելության մթնոլորտը և հայերի զանգվածային կոտորածների մասին լուրերը շարունակում են

խաթարել նրա զգայուն հոգեկան վիճակը։ Մինչև 1919 թվականը նրան սկզբում տեղավորում են թուրքական ռազմական հոսպիտալում և ապա՝ տեղափոխում Փարիզի հոգեբուժարաններ, որտեղ էլ տառապանքների մեջ անց է կացնում իր կյանքի վերջին տարիները։ Կոմիտասին ընկալում են որպես ցեղասպանության զոհ և արվեստում պատկերում որպես ցեղասպանության հիմնական խորհրդանիշներից մեկը։ Կոմիտասը համարվում է ժամանակակից հայկական դասական երաժշտության հիմնադիրը։ Հայտնի է որպես երաժշտական ազգագրության ռահվիրաներից մեկը։

2015 թվականի հունվարի 29-ին Երևանում Կոմիտասի անվան զբոսայգում տեղի ունեցավ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բացումը, որի կառուցման որոշումը կայացվել էր 2013 թվականի մայիսի 30-ին Հայաստան համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում՝ ՀՀ նախագահի առաջարկի հիման վրա[14]։ Նույն տարվա հունիսի վերջին «Վերածնունդ» մշակութային և ինտելեկտուալ հիմնադրամի շնորհիվ իրականացավ Կոմիտաս Վարդապետի ծրագիրը.լույս տեսավ նրա կողմից կազմված «Հազար ու մի խաղ» 100 ժողովրդական երգերի ընտրանին,

որի շնորհանդեսը տեղի ունեցավ նույն թվականի հուլիսին։ 1915 թվականի ապրիլի 24-ին երիտթուրքական վարչակարգը շուրջ 600 հայ մտավորականների հետ ձերբակալեց նաև Կոմիտաս Վարդապետին և աքսորեց Չանղր։ Երկու շաբաթ անց եվրոպական և ամերիկյան դեսպանների միջնորդությամբ նա ազատ արձակվեց և վերադարձավ Կոստանդնուպոլիս։ Աքսորից վերադառնալուց հետո Կոմիտաս Վարդապետի առողջական վիճակը կտրուկ վատացավ։ Եղեռնի քստմնելի դրվագները, իր աշխատանքների կորուստը ծանր ազդեցին Վարդապետի նուրբ և զգայուն ներաշխարհի վրա, և նա կորցրեց հոգեկան անդորրը՝ ծանր և խորը վերապրելով իրականության և իր ժողովրդի կործանման ողբերգությունը։ Նրա թողած վերջին գրության մեջ, երբ բորբոքված ուղեղում դեռ չէին մարել գիտակցության վերջին կայծերը, հնչում է անելանելիությունն ու խոր հուսահատությունը. Վարդապետի մոտ ակնհայտորեն խորանում էին հետապնդման մանիայի ախտանշանները, և ըստ հուշագիրների՝ յուրաքանչյուր ցնցում և ձայն սարսափեցնում էր նրան Կոմիտասի մահարձանը, Երևան, Կոմիտասի անվան պանթեոն Վարդապետին թվում էր, թե թուրքերն անընդհատ

հետապնդում են իրեն, ուստի և նա ձգտում էր բացարձակ միայնության և լռության, հաճախ չէր ընդունում իր վաղեմի բարեկամներին և ծանոթներին, իրեն տեսնել ցանկացող երկրպագուներին։ Բժշկապետ Վահրամ Թորգոմյանը 1916 թվականի աշնանը, խորհրդակցելով Կոստանդնուպոլսի հայտնի հոգեբույժ դոկտոր Գոնոսի հետ, Վարդապետին տեղափոխեց Շիշլիի հիվանդանոցը, ուր Վարդապետը մնաց մինչև 1919 թվականը։ Իր պայծառատեսության պահերին նա բազմիցս բողոքել է հիվանդանոցի անտանելի պայմաններից. **«Մնունդը՝ շան լափ, կեղտ ու ոջիլ, միակ բուժումը՝ մեկուսացում և անտարբեր վերաբերմունք»։** Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հայ գաղութը Վարդապետի վիճակը բարելավելու նպատակով որոշեց նրան ուղարկել Ֆրանսիա։ 1919 թվականի ապրիլին Կոմիտասին տեղափոխեցին Փարիզի Վիլ-Եվրայի հոգեբուժարան, իսկ 1922 թվականի օգոստոսին միջոցների սղության պատճառով՝ Վիլ-Ժուիֆի հոգեբուժարան, ուր Վարդապետը մնաց մինչև իր կյանքի վերջը։ Իրականում Կոմիտաս Վարդապետի հիվանդության վերաբերյալ կան բազմաթիվ վարկածներ։ Մինչ օրս նրա հիվանդությունն ու մահվան ստույգ պատճառը մնում է անհայտ։ Վերջինս

անսպառ նյութ է հանդիսանում գիտական և պատմական ուսումնասիրությունների, քննարկումների համար։ Կոմիտաս Վարդապետը վախճանվեց 1935 թվականի հոկտեմբերի 21-ին առավոտյան ժամը 6-ին Վիլ-Ժուիֆի հիվանդանոցում՝ գարշապարի թարախակալումից առաջացած բարդությունների հետևանքով։ Մահից հետո ստեղծվեց Կոմիտաս Վարդապետի մահադիմակը։ 1936 թվականին նրա աճյունը փոխադրվեց Երևան և թաղվեց Կոմիտասի անվան պանթեոնում։ Կոմիտասի հուշարձանը Քվեբեկում։ Հիվանդության տարիներին զգալի տուժել է նրա ազգագրական և գիտական ձեռագիր ժառանգությունը։ 1950-ական թվականներին նրա ձեռագրերը Փարիզից տեղափոխվեցին Երևան։

Անգնահատելի է Կոմիտասի հավաքչական ու գիտական աշխատանքը։ Նա ժողովրդական երգերը գրառել է ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի վերլուծական դիտողականությամբ[15]։ Երաժշտական բանահյուսության մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը (հեթանոս հավատալիքներին առնչվող հորովելների եղանակները,« Սասունցի Դավիթ», «Մոկաց

Միրզա» վիպական ասերգերը, անտունիներն ու հոգևոր տաղերը) համարվում է պատմամշակութային խոշոր հայտնագործություն, իսկ հավաքած ավելի քան 4000 գեղջկական երգերը՝ հայ ժողովրդական երգարվեստի անթոլոգիա։ Կոմիտասը տեսական աշխատություններում բացահայտել է ժողովրդական երաժշտության կենսական հիմքերը, բնութագրել հայ երգի գեղագիտական արժանիքները, վերլուծել տեսակներն ու կառուցվածքային հատկանիշները։ Նա հիմնականում գրել է մեներգային և խմբերգային երգեր, որոնք սերում են ժողովրդական կամ հոգևոր սկզբնաղբյուրից. «Առ գետս Բաբելացվոց» սաղմոսը, «Ո՞ւր ես գալի, ա՜յ գարուն» կանտատը, «Մութն էր երկինքը» ռոմանսը, «Կաքավի երգը», «Գարուն ա», «Քելեր, ցոլեր», «Լոռու գութաներգ», «Անտունի», «Ծիրանի ծառ» երգերը, նաև հարսանեկան, վիճակի, պարերգային և այլ շարքեր։ Կոմիտասը դիմել է նաև այլ ժանրերի. եզակի են նրա «Դաշնամուրային պարերը», որտեղ կիրառել է ժամանակի համաշխարհային երաժշտության համար նոր և խիստ ինքնատիպ միջոցներ։ Քնարական-կենցաղային «Անուշ», երգիծական-կենցաղային «Քաղաքավարության վնասները»,

պատմահայրենասիրական «Վարդան» և դյուցազնահերոսական «Սասունցի Դավիթ» օպերաների ստեղծման աշխատանքները կոմպոզիտորին չի վիճակվել ամբողջացնել[2]։ «Վարդան» օպերայի մի քանի ուրվագրերով, «Սասունցի Դավթի» մի փոքր դրվագով սահմանափակվում են մեզ հասած ձեռագիր նյութերը։ Ուսումնասիրությունների համաձայն, Կոմիտասն ավարտել է «Քաղաքավարության վնասներ» օպերայի 1-ին և 2-րդ, մասամբ 3-րդ պատկերները։ Մեզ են հասել հատվածներ «Անուշ»-ից, որոնք վկայում են օպերայի վառ ազգային ուղղվածության մասին։ Կոմպոզիտորն օգտագործել է թե՛ գեղջկական մեղեդիներ, թե՛ ինքն է գրել ժողովրդական երգի նման պարզ, մատչելի մեղեդիներ։ Օպերայում կան երկու ավարտված վոկալ հատվածներ, որոնց համար Կոմիտասն օգտագործել է նաև գուսանական երգեր։ «Անտունին» խորը հոգեբանական ստեղծագործություն է, որտեղ նկարագրվում են «տնավեր» պանդուխտի ապրումները, իղձերն ու կարոտը։

---

[2] Գուրգեն Գասպարյան, Մարինե Մուշեղյան «Կոմիտաս Վարդապետ. ուսումնասիրություններ և յոդուածներ», էջ 105, Երևան, 2007

Երաժշտության և պոեզիայի օրգանական միասնության շնորհիվ Կոմիտասը ստեղծել է հայ պանդուխտի արտակարգ ուժով համակված կերպարը։ Մեղեդին աչքի է ընկնում հուզական լարվածությամբ և դրամատիզմով, իսկ հաճախակի հանդիպող պաուզաներն հառաչանք են հիշեցնում։ «Անտունիի» հարուստ և ծավալուն ձևը՝ օժտված ներքին միասնական զարգացմամբ, թույլ է տալիս խոսելու երգային ժանրի սիմֆոնիզացիայի մասին։ Հիմնական կերպարի բացահայտմանն է նպաստում նաև դաշնամուրային նվագակցությունը։ Այն աչքի է ընկնում մեծ ձայնածավալով. կոմպոզիտորն ազատորեն օգտագործում է թե՛ ստորին, թե՛ վերին ռեգիստրները՝ ստեղծելով խորը ու, միաժամանակ, թափանցիկ հնչողություն։ Այս ստեղծագործության մասին Կլոդ Դեբյուսին գրել է.

> **Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու։**

Կոմիտասը որպես մանկավարժ

Կոմիտաս Վարդապետի գործունեության շերտերը բազմաթիվ թելերով ներհյուսված են հայ երաժշտության տարբեր ճյուղերին: Երաժշտատեսական, ստեղծագործական, ազգագրական,հետազոտական, կատարողական-խմբավարական փայլուն գործունեությունից բացի, նա ծավալել է մանկավարժական բուռն գործունեություն:

Կոմիտաս Վարդապետի ուսուցչական գործունեությունը սկիզբ է առնում 1893-ից, երբ Վեհափառ հայրապետ Մկրտիչ Խրիմյանի հրամանով նշանակվում է երգեցողության ուսուցիչ՝ փոխարինելով համբավավոր երաժիշտ Կարա-Մուրզային:

Երիտասարդ Կոմիտասը պարապմունքների ընթացքում հոգևոր երաժշտությանը զուգահեռ ուսուցանում էր ժողովրդական երաժշտություն, նաև եվրոպական ձայնագրության համակարգ, առանց որի հնարավոր չէր համարում առնչությունը համաշխարհային երաժշտական մշակույթի նվաճումներին:

Դեռևս 1895-ին, ճեմարանում եկեղեցական երաժշտության դասավանդման գործը նոր բարձրության հասցնելու համար, Կոմիտաս Վարդապետը կազմում է ուսումնական գործընթացի նորոգման հակիրճ ծրագիր, որն ըստ էության, մանկավարժականմեթոդական առանցքային նշանակության ուղեցույց էր: Կոմիտասը ուսումնական ծրագիրը բացահայտում է ճեմարանում երաժշտության ուսուցման մեջ առկա մեթոդական թերի կողմերը, ցույց տալիս դրանց շտկման ուղիները, մեծապես կարևորում այդ գործում լիարժեք դասագրքերի անհրաժեշտությունը[3]: Այդ են փաստում նաև Ուսուցչի երաժշտության տեսության և հարմոնիայի դասագրքերի ձեռագրերը:

1896–1899 թթ. Բեռլինում երաժշտական կրթություն ստացած Կոմիտաս Վարդապետը Գևորգյան ճեմարանում նշանակվում է երաժշտության ուսուցիչ և երգեցիկ խմբի ղեկավար:

---

[3] Մարգարիտա Բարսամյան, Հայ երաժշտության պատմություն, Երևան 2010թ

Նկ. 1 Կոմիտաս, հեղինակ՝ Մ. Հարությունյան

Մանկավարժական գործունեությանը զուգահեռ Կոմիտաս Վարդապետը հաճախ էր հանդես գալիս հայ երաժշտության վերաբերյալ դասախոսություններով: Իր ժամանակակիցների բնորոշմամբ՝ Կոմիտասի գործունեությունը համեմատելի է մասնագիտական մի ամբողջ հաստատության գործունեության հետ:
Ուսուցչի մանկավարժական հետագա բուռն գործունեությունը 1910-ից կապվում է Կոստանդնուպոլսի հետ:

Էջմիածնից Կ. Պոլիս տեղափոխվելու նպատակը՝ պոլսահայությանը հայ ինքնուրույն երաժշտությանը ծանոթացնելն էր, ապա՝ այնտեղ երգչախումբ հիմնելը, երաժշտանոց բացելն ու հայ երաժշտության զարգացման համար բարեբեր պայմաններ ստեղծելն էր: Այդ նպատակներից թերևս անկատար մնաց երաժշտանոց հիմնելու Ուսուցչի բաղձանքը, սակայն Կոմիտասը իր բազմամյա բեղմնավոր մանկավարժական գործունեության ընթացքում հասցրեց կրթել սաների և սանուհիների մի պայծառ բույլ, որոնք էլ դարձան Կոմիտասի դարբնած ուղու

շավիղները և շարունակեցին Ուսուցչի հյուսած ճանապարհը, ինչպես մեծ Ուսուցչի կենդանության օրոք, այնպես էլ՝ դրանից հետո:

Կոմիտասի աշակերտների թվում են Սպիրիդոն Մելիքյանը, Վահան Տեր Առաքելյանը, Միհրան Թումաճանը, Բարսեղ Կանաչյանը, Վաղարշակ Սրվանձտյանցը և Վարդան Սարգսյանը, որոնք անգնահատելի ներդրում են ունեցել հայ երաժշտության զարգացման գործում նկ. 2: Կոմիտասի հետազոտությունների արդյունքում հազարամյակների պատմություն ունեցող հայ ավանդական երաժշտական մշա- կույթի հիմնական ճյուղերից կարևորվեցին հատկապես հայ գեղջկական երաժշտական արվեստն ու հայ միջնադարյան եկեղեցական երգարվեստը: Դրանց ուսումնասիրությունը Կոմիտասին հնարավորություն տվեց հասկանալու և տեսական հստակությամբ ձևակերպելու հայ երաժշտության ձայնակարգային հենքի մի շարք առանձ նահատկություններ:

Հայ երաժշտության մոդալ տեսության հետագա զարգացման գրեթե բոլոր փուլերը հենվեցին Կոմիտասի այս հետազոտությունների վրա: Որպես երաժշտագետ անփոխարինելի եղավ նրա դերը նաև հայ բանահավաքչության

հետագա զարգացման պատմությանմեջ: Նրա հավաքած շուրջ չորս հազար ժողովրդական երգերից, ցավոք, պահպանվել և մեզ է հասել գրեթե կեսը: Վերջապես, Կոմիտասի երաժշտագիտական գործունեության կարևորագույն ոլորտը հայ միջնադարյան երաժշության, իսկ առավել կոնկրետ, խազային նոտագրության ուսումնասիրության դաշտն էր: Այդ համակարգի վերծանությունը դարձավ Կոմիտասի կյանքի կարևորագույն գործերից մեկը: Իր ժամանակի որոշ հրապարակումներ հիմք են տալիս պնդելու, որ հայկական խազերի վերծանությունը նա ավարտել էր նպատրաստվում էր հրատարակել Գերմանիայում: Ցավոք, առաջին համաշխարհային պատերազմն ամեն բան խառնեց, և այդ ոլորտի հիմնական աշխատությունը հավանաբար կորավ: Ինչևէ, այսօր խազագիտության բնագավառի բոլոր նոր ուսումնասիրությունները դարձյալ հենվում են Կոմիտասի հետազոտությունների վրա: Թե՛ հայ

գեղջկական, թե՛ միջնադարյան արվեստի ուսումնասիրությունը, նոր տեսական համակարգերի մշակումը թույլ են տալիս Կոմիտա- սին համարելու հայ երաժշտագիտության արդի փուլը ձևավորողտեսաբան:

Մյուս կողմից, որպես կոմպոզիտոր, իր տեսական հայտնա- գործությունների կիրառմամբ բազմաձայն մտածողության նոր մո- դելի մշակումը Կոմիտասն իրացրեց իր ստեղծագործություններում: Այս տրամաբանությամբ միայն կարելի է հասկանալ Կոմիտասի՝ ոչ-տերցիային կառուցվածքի ակորդների ողջ համալիրի ստեղծումը, դրանց կիրառությամբ հարմոնիկ ուրույն դարձվածաբանության և ձևակառուցողական նոր մոտեցումների կերտումը և այլն:

Եթե նկատի ունենանք, որ հայ երաժշտական ավանդական մտածողությունը միամեղեդային (մոնոդիկ) էր, ապա բազմաձայնելիս, հարմոնիկ լեզվի նորարարություններին առընթեր, դրան առավել հարմար էին համարվում բազմաձայն գծային մտածողության ձևերը: Երաժշտական մտածողության այս տեսակն ու հայ ավանդական երաժշտության ոչ օկտավային կառուցվածքի ձայնակար- գերը (լադեր) հնարավորություն տվեցին իր մի շարք

ստեղծագործություններում կիրառել պոլիլադայնություն:

Փաստորեն, Կոմիտասը որպես կոմպոզիտոր և տեսաբան մշակեց հայ բազմաձայն երաժշտական մտածողության բոլոր հիմնական տիպական տարրերը: Հայ երաժշտության զարգացման պատմական հեռանկարի մեջ Կոմիտասի արածը խիստ եզակի էր: Նրան հաջողվել էր ստեղծել երաժշտական մտածողության մի համակարգ, որը խիստ տիպական էր հայ ժողովրդի ավանդական մտածողության առանձնահատկությունների տեսանկյունից, մյուս կողմից՝ բացարձակապես այլ տեսակի մի համակարգ էր, որը երբևէ այս ժողովուրդը չէր կիրառել իր երաժշտական ավանդույթում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հայ կոմպոզիտորական արվեստի տիպական հիմնադրույթները մշակելուց և այդ արվեստի հիմնադիրը լինելուց զատ՝ նա հայ երաժշտության խնդիրների ընկալումն ու գեղարվեստական լուծումները համադրեց XX դարասկզբի եվրոպական ամենանորարարական միտումներին: Հենց երաժշտական լեզվի նորոգության տեսանկյունից նա կարող է ներկայանալ որպես XX դարասկզբի երաժշտական մտածողությունը վերափոխող կոմպոզիտոր–տեսաբաններից մեկը, որին հաջողվել էր իր խիստ ուրույն երաժշտական համակարգը մշակել:

Կոմիտասի նորարարական մոտեցումներն այսօր էլ արդիական են հայ երաժշտության ժամանակակից հիմնահարցերը լուծելիս: Այս է պատճառը, որ հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրԿոմիտասը նաև հայ նորարարական արվեստի հիմնադիրն է:

Հայ ավանդական երաժշտական մշակույթի հիմնական ճյուղերի ուսումնասիրությունը, հայ երաժշտական մտածողության հիմնական առանձնահատկությունների հստակեցումը, հայ կոմպոզիտորական արվեստի հիմնական սկզբունքների ձևակերպումն ու նոր բազմաձայն լեզվահամակարգի մշակումը Կոմիտասն իրականացրեց հայ ժողովրդի ինքնության հարցերի լայն համատեքստում,ինչը նրան դուրս բերեց սոսկ երաժշտական արվեստի շրջանակներից և դարձրեց հայ ժողովրդի պատմության նորագույն փուլի ամենախոշոր գործիչներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ (1869-1935)», Երևան, 2009
2. Գուրգեն Գասպարյան, Մարինե Մուշեղյան «Կոմիտաս Վարդապետ. ուսումնասիրություններ և յօդուածներ», Երևան, 2007
3. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», Երևան, 2009
4. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ. նամականի», Երևան, 2009։
5. Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960։
6. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1977, էջ 66-69
7. Մարգարիտա Բարսամյան, Հայ երաժշտության պատմություն, Երևան 2010թ
8. Խաչիկ Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Երևան 2020թ
9. Կոմիտաս հոդվածներ մատենաշար, Երևան 2017թ
10. Գուրգեն Գասպարյան, Մեր ժամանակների Կոմիտասը, Երևան 2008թ